

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Շնաբան
I. Դերը	Շնաբանը կատարում կամ մասնակցում է ծառայողական և սիրողական շների բուժման, աճեցման, խնամքի, կերակրման, բազմացման աշխատանքներին, շներին վարժեցնում և նախապատրաստում է տարբեր ծառայությունների համար, այդ թվում պահպանության, որոնողական և փրկարարական աշխատանքներում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Կազմակերպել շների պահումը, խնամքը, կերակրումը	
Աշխատանքային գործընթացը	Օգտվելով մշակված և կիրառվող մոտեցումներից ըստ շների ցեղերի առանձնահատկությունների կազմել շների կերակրման, պահման և խնամքի ռեժիմները, հաշվել կերակրման չափաքանակները, հսկել պահման պայմանների պահպանությունը, հետևել շների արտաքին կազմվածքի փոփոխություններին, գնահատել այդ փոփոխությունները, կատարել խնամքի և հիգիենայի ռեժիմներով նախատեսված աշխատանքները, օգտագործել անհրաժեշտ գործիքները և հարմարանքները, լրացնել անհրաժեշտ փաստաթղթերը:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - ըստ ցեղատեսակների և սեռահասակային խմբերի կերակրման նորմաները պահպանվել է, - կերակրման ռեժիմները պահպանվել է, - կերակրման համար օգտագործված սննդի կազմը համապատասխանում է տվյալ տեսակի և խմբի պահանջներին, - շների խնամքի բոլոր գործողությունները համապատասխանում է տվյալ տեսակի և խմբի համար սահմանվածներին, - շների պահման պայմանները համապատասխանում են սահմանված չափանիշներին, - շների արտաքին կազմվածքի գնահատումը և եզրահանգումները ճիշտ է, - խնամքի և հիգիենայի միջոցներն օգտագործվել է ըստ նշանակության և ճիշտ, - գործընթացների վերաբերյալ փաստաթղթերը սահմանված կարգով կազմված է:
Խնդիրների բնագավառ 2. Կատարել շների վարժեցման ընդհանուր նախապատրաստական աշխատանքներ, շներին պատրաստել վարժեցման ընդհանուր կուրսի համար	
Աշխատանքային գործընթացը	Ըստ շների հետագա վարժեցման յուրահատկության վարժեցման ընդհանուր նախապատրաստական աշխատանքների կազմի որոշակիացում, այդ աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում և հիմնավորում, նախապատրաստական աշխատանքների տարածքների կահավորման վիճակի գնահատում, վարժեցման համար շների նախապատրաստման քայլերի սահմանում, շների տեստավորման անցկացում, դրանց արդյունքների գնահատման չափանիշների հստակեցում, շների վարքագծի փոփոխությունների գնահատում և համապատասխան քայլերի իրականացում, նախապատրաստական աշխատանքները կատարողների իրահանգավորում, աշխատանքների

	համար պահանջվող միջոցների և գույքի տեսակների և քանակների որոշակիացում, գործընթացի ընթացքի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի լրացում
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - շների վարժեցման ընդհանուր նախապատրաստական աշխատանքների անհրաժեշտությունը հիմնավորում է, - նախապատրաստական աշխատանքների կազմը համապատասխանում է հետագա վարժեցման կարիքներին, - նախապատրաստական աշխատանքների ժամանակացույցը կազմված է ըստ հանձնարարականի, - ընդհանուր վարժեցման համար տարածքների ընտրությունը և կահավորումը ճիշտ է, - ընդհանուր վարժեցման գործողությունների քայլերը հիմնավոր է, - ըստ նպատակի շների տեստավորումը ճիշտ է կատարել, - տեստավորման արդյունքների ընդհանրացումը ճիշտ է, - վարժեցման գործողությունները ճիշտ է կատարում, - աշխատողների հրահանգավորումը ճիշտ է կատարում, - վարժեցման ընթացքում շների վարքագծի փոփոխությունները հիմնավորված է գնահատում, - վարժեցման ընթացքում գույքը և սարքավորումները ճիշտ է օգտագործում, - վարժեցման ընթացքի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը ճիշտ լրացված է:
Խնդիրների բնագավառ 3. Ելնելով շների հետագա օգտագործման խնդիրներից մասնակցել նրանց վարժեցման աշխատանքների պլանի կազմմանը	
Աշխատանքային գործընթացը	Շների հետագա օգտագործման ուղղություններին համապատասխան առանձնացնել նրանց նպատակային վարժեցման գործողությունների առանձնահատուկ մասերը, յուրաքանչյուր մասի համար ձևավորել քայլերի հաջորդականության հիմնավորված սխեմաներ: Կազմված սխեմաների հիման վրա ձևավորել վարժեցման աշխատանքների պլան:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - շների նպատակային վարժեցման յուրահատկության գնահատումը հիմնավոր է, - ըստ նպատակային վարժեցման ուղղության առանցքային քայլերի առանձնացումը ճիշտ է, - ըստ նպատակային վարժեցման ուղղության վարժեցման պլանը ճիշտ է կազմել:
Խնդիրների բնագավառ 4. Մասնակցել շների բազմացման աշխատանքներին	
Աշխատանքային գործընթացը	Փորձարարական և սելեկցիոն աշխատանքների համար հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, կատարել կենդանիների որակական գնահատում (բոնիտիրովկա)՝ նրանց ցեղային արժանիքները գնահատելու նպատակով, կենդանիների հիբրիդային ուժի (հետերոզիս) և ազգակցական տեսակների խաչասերման (ինբրիդինգ) հնարավորության հիման վրա բազմացման և սելեկցիայի համար ընտրել շներ, կիրառել շների բուծման և բազմացման տարրեր, խնամել քթոթյուններին, վարել անհրաժեշտ փաստաթղթեր:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - շների ցեղային արժանիքների կատարելագործման անհրաժեշտությունը հիմնավորում է,

	<ul style="list-style-type: none"> - փորձարարական և սելեկցիոն աշխատանքների նպատակը ճիշտ է բացատրում, - սելեկցիոն աշխատանքներում օգտագործվող հիմնական հասկացությունների իմաստը և նշանակությունը ճիշտ է մեկնաբանում, - կենդանիների որակական գնահատման արդյունքների կիրառման հնարավորությունը ճիշտ է գնահատում, - շների բազմացման և սելեկցիայի համար ընտրություն կատարելու հանձնարարականը ճիշտ է կատարել, - կենդանիների բուժման և բազմացման գործընթացի գործողությունները ճիշտ է կատարել, - քրթթյունների խնամքի գործողությունները ճիշտ է կատարել, - անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ լրացված է:
--	--

Խնդիրների բնագավառ 5. Շներին պատրաստել վարժեցման հատուկ կուրսերի համար, անցկացնել վարժանքներ

Աշխատանքային գործընթացը	<p>Վարժեցման հատուկ կուրսերի համար կատարել շների տեստավորում, դրանց արդյունքներով ընտրել շներին, ստուգել վարժանքի պայմանները և դրանց համապատասխանությունը հատուկ կուրսի կարիքներին, ըստ հատուկ կուրսի ուղղությունների անցկացնել վարժանքներ՝ պահպանելով վարժանքի տվյալ տեսակի համար սահմանված մեթոդական մոտեցումները, վարժանքների ընթացքում հետևել շների վարքագծի փոփոխություններին, վարժանքների ընթացքում հետևել շների առողջության ցուցանիշներին՝ անհրաժեշտության դեպքում տեղեկացնել մասնագետին: Վարժանքների մասին կազմել անհրաժեշտ փաստաթղթեր:</p>
--------------------------------	---

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - ըստ հատուկ կուրսի առանձնահատկության շների տեստավորումը ճիշտ է կատարել, - հետագա վարժեցման համար շների ընտրությունը ճիշտ է, - վարժանքի պայմանները համապատասխանում են հատուկ կուրսի տվյալ տեսակի կարիքներին, - վարժանքները կատարվում է տվյալ կուրսի նպատակներին համապատասխան, - վարժանքի ընթացքում շների վարքագծի գնահատումը ճիշտ է, - ըստ վարքագծի առանձին փոփոխությունների իրականացվող քայլերը ճիշտ է, - շների առողջության և ֆիզիկական վիճակի գնահատումը ճիշտ է, - վարժանքի ռեժիմները համապատասխանում են ընդունված մեթոդաբանությանը, - վարժանքների վերաբերյալ փաստաթղթերը ճիշտ լրացված և ամբողջական է:
----------------------------	--

Խնդիրների բնագավառ 6. Անցկացնել շների փորձարկումներ և մրցույթներ

Աշխատանքային գործընթացը	<p>Սահմանել շների փորձարկումների նպատակները, կատարել փորձարկումների նախապատրաստական աշխատանքներ, ստուգել փորձարկումների պայմանների համապատասխանությունը գործընթացի պահանջներին, իրականացնել փորձարկման գործողություններ, ամփոփել և ընդհանրացնել արդյունքները:</p> <p>Կատարել շների մրցույթների նախապատրաստական աշխատանքներ, ապահովել մրցույթների համար անհրաժեշտ պայմաններ, կազմակերպել մրցույթը, ամփոփել և ընդհանրացնել արդյունքները:</p>
--------------------------------	--

<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - շների փորձարկումների նպատակները ճիշտ սահմանել է, - շների փորձարկումների նախապատրաստական աշխատանքները ամբողջությամբ կատարվել է, - փորձարկումների պայմանների համապատասխանությունը ներկայացվող պահանջներին ապահովել է, - շների փորձարկումների ընթացակարգը պահպանվել է, - շների մրցույթների նախապատրաստումը ամբողջական է, - մրցույթներն անց է կացվել սահմանված կարգով, - փորձարկումների և մրցույթների ընթացքի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերն ամբողջական է:
<p>Խնդիրների բնագավառ 7. Ըստ ծառայության ուղղությունների օգտագործել շների</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Ծառայության ուղղությանը համապատասխան շներին օգտագործելու յուրահատկությունների սահմանում, շներին օգտագործելու սխեմայի և քայլերի մշակում, մինչև շներին օգտագործելը նախապատրաստական աշխատանքների կատարում, շների տեստավորում, խանգարող հանգամանքների բացառում, շներին օգտագործելու արդյունքների ամրագրում և փաստաթղթերի կազմում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - ծառայության տվյալ տեսակում օգտագործելու համար շների պատրաստվածության գնահատումը ճիշտ է, - ըստ հանձնարարականի ծառայությունը մատուցված և արդյունքն ապահովված է, - ծառայության մատուցման վերաբերյալ փաստաթղթերը լրացված է:
<p>Խնդիրների բնագավառ 8. Կազմակերպել և ղեկավարել ծառայությունների մատուցման աշխատանքները</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Մասնակցել մատուցվող ծառայությունների հիմնական ցուցանիշների պլանավորմանը, ըստ անհրաժեշտության կատարել աշխատանքի բաժանում, հսկել աշխատանքների կատարման ընթացքը, իր լիազորությունների շրջանակում հրահանգավորել աշխատողներին, կատարել ծառայությունների կատարման ընթացքի հետ կապված հաշվարկներ, գնահատել ծառայությունների կատարման արդյունքները, ծառայությունների մատուցման շուկայի ընդլայնման հնարավորությունները:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - մատուցվող ծառայության վերաբերյալ հիմնական ցուցանիշների կազմն ամբողջական է, - յուրաքնչյուր ցուցանիշի ձևավորման մեթոդաբանությունը հստակ մեկնաբանում է, - աշխատանքների բաժանումը կատարողների մեջ տրամաբանված է, - աշխատանքների կատարման ընթացքի հսկման քայլերը ժամանակին կատարվել է, - պահանջվող նյութական միջոցների վերաբերյալ հաշվարկները ճիշտ է կատարել, - այլ հնարավոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը հիմնավորում է, - փաստաթղթային տնտեսությունը ճիշտ է վարում:
<p>III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության</p>	<p>Շնաբանը իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս պատասխանատվություն է կրում շների պահման, խնամքի, կերակրման պայմաններն ապահովելու, գործողություններ կատարելու,</p>

շրջանակ/	համապատասխան նորմատիվ ակտերով սահմանված գործընթացներն իրականացնելու, շների առողջության հետ կապված որոշակի գործողություններ կատարելու, շների վարժեցման կարգը և ռեժիմները պահպանելու, նյութական միջոցները խնամքով և արդյունավետ օգտագործելու, ըստ նպատակների բնույթի և ծառայության առանձնահատկության շներին ընտրելու, ղեկավարությանն անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու համար:
IV. Լեզուները	հայերեն- գերազանց ռուսաց լեզու- բավարար այլ օտար լեզու- բավարար
V. Համակարգիչը	ա. MS Word - բավարար բ. MS Excel - բավարար գ. Internet Explorer - բավարար
VI. Գիտելիքները	Շների օրգանների կառուցվածքը և տեղագրական տեղադրվածությունը, շների հիմնական ֆիզիոլոգիական բնութագրերը, բջջաբանության, հյուսվածքաբանության, սաղմնաբանության, կազմաբանության առանցքային հասկացությունները, շների ներվային համակարգը, ներվային և էնդոկրին համակարգերի կարգավորող ֆունկցիաները, շների ներքին և արտաքին կազմվածքը, կենդանիների ցեղային առանձնահատկությունները, շների ցեղատեսակների էվոլյուցիան, անասնաբուժության և կենդանիների հիգիենայի հիմունքները, սննդային թունավորումների պատճառները և նշանները, շների մակաբույծները, դրանց տեսակները և դրանց դեմ պայքարի ձևերն ու միջոցները, շների հիվանդությունները, դրանց նշանները, անասնաբուժության պարզագույն գործողությունների իրականացումը, զոոհիգիենայի նորմաները, լվացող և ախտահանող նյութերի տեսակները, դասակարգումը, կիրառման կանոնները, պահպանման պայմանները, աշխատանքի անվտանգության ապահովման կանոնները, կարգավորող իրավական նորմատիվ ակտերը, պատասխանատվությունը, աշխատակիցների հրահանգավորման կարգը և պարբերականությունը: Շների պահման, խնամքի, կերակրման տեխնոլոգիաները, կերակրման նորմաները: Շների բազմացման հիմունքները, այդ նպատակով շների ընտրությունը: Շների սելեկցիայի մեթոդները, ցեղաձևավորման գործընթացը և նպատակները: Հիբրիդային ուժի և ազգակից տեսակների խաչասերման մասին տեղեկությունների օգտագործման անհրաժեշտությունը և առանձնահատկությունները: Տարբեր ցեղերի քոթոթների աճման առանձնահատկությունները: Շների վարժեցման ձևերը, մեթոդները, հնարքները, օգտագործվող գույքը: Ըստ տարբեր ծառայության տեսակների շների ցեղերի դասակարգումը: Ծառայողական, դեկորատիվ, որսորդական և սպորտային շնաբուծության առանձնահատկությունները: Շների ցեղերի դասակարգումը ըստ գործող համակարգերի: Շների հիմնական ցեղերի ստանդարտները, նրանց փորձարկման և մրցույթների նորմատիվները:
VII. Կարողությունները և հմտությունները	Արտաքին նշաններով շների սեռը, ցեղատեսակը, տարիքը որոշելու կարողություն, շների կառուցվածքային տիպը և բարձրագույն ներվային գործունեության տիպը որոշելու կարողություն, հիվանդ կենդանիներին բացահայտելու կարողություն, անասնաբուժական ոչ բարդ նշանակումները կատարելու հմտություն, ախտահանող և լվացող լուծույթներ պատրաստելու

	<p>հմտություն, ախտահանման գործողություններ կատարելու հմտություն, վտանգավոր և վնասակար գործոնները բացահայտելու կարողություն, անվտանգության անհատական և կոլեկտիվ միջոցները կիրառելու հմտություն, շների կերակրման նորմաները և ռեժիմները կիրառելու հմտություն, ոլորտի վերաբերյալ իրավական և նորմատիվ փաստաթղթերից օգտվելու կարողություն, վնասակար և վտանգավոր վիճակները բացահայտելու նպատակով նմուշներ վերցնելու հմտություն, շների գենոտիպը բնութագրելու կարողություն, շների բազմացման նպատակով զույգերի ընտրության հմտություն, շների համար օգտագործվող հարմարանքները կիրառելու հմտություն, շների վարժանքի առանձնահատկությունները հաշվի առնելու կարողություն, վարժանքի ձևերը և մեթոդները կիրառելու հմտություն, ըստ նպատակի շների տեստավորում և փորձարկում անցկացնելու հմտություն, դրա արդյունքներով շների ընտրության կարողություն, համապատասխան գործողություններում շներին օգտագործելու հմտություն, շների դաստիարակության հմտություն:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, շփվող, նախաձեռնող, մաքրասեր, ընկալունակ, թիմում աշխատելու պատրաստ, ընկերասեր, համբերատար:</p>